ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ 0010, ՏԻԳՐԱՆ ՄԵԾԻ 4, Հեռ. 543 991, Ֆաքս 543 997, E-mail: info@anra.am

No 11-J-54 22.11 2016թ

ԻԱԿ ՀԿ նախագահ
տիկին Լիանա Դոյդոյան

Հարգելի տիկին Դոյդոյան

Ի պատասխան Ձեր 17.11.2016թ. N 306-ի 6 հարցման հայտնում եմ, որ 2016թ.-ի հունվարի 1-ից մինչեւ հոկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի աշխատակազմից ս/թ մարտ ամսին աշխատանքի բարձր արդյունավետության, առաջադրանքների, ծառայողական պարտականությունների եւ այլ հանձնարարականների որակյալ կատարման համար պարգեւատրվել են մեկ հաստիքային միավորի չափով հետեւյալ աշխատակիցները՝ կոմիտեի ներքին աուդիտի բաժնի պետը, համակարգերի եւ կոմպոնենտների բաժնի փորձագետը եւ կոմիտեի հավաքարարը: Պարգեւատրման ընդհանուր գումարը կազմել է 601045 դրամ:

Միաժամանակ հայտնում ենք, որ կոմիտեի աշխատակազմի քաղաքացիական ծառայողները կիսամյակային հաշվետվությունների հիման վրա վերը նշված ժամանակահատվածի ընթացքում, համաձայն «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի եւ «ՀՀ 2016թ. պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի հավելված N1-ի աղյուսակ N04-03-03-ի «Քաղաքացիական, դատական եւ պետական այլ ծառայողների պարգեւատրում» հոդվածով նախատեսված գումարների հաշվին պարգեւատրվել են 13247075 դրամ գումարով:

Հարգանքով՝

Աշոտ Մարտիրոսյան